Արձանագրություն N 2

**«ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գ. Ծաղկահովիտ**

10.09.2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Ջ. Սանոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Ավետիսյան
Վ. Հայրապետյան
Ռ. Վարդանյան
Յ. Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Ասատրյան

1. **Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին**

(Ջ. Սանոյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ***«ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5»*** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը կատարվել է <<armeps.am>> համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ին, ***Արագածոտնի մարզ,գյուղ Ծաղկահովիտ, Հովհաննիսյան 16*** հասցեում: Համակարգի միջոցով հայտ էր ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| | |
|---|---|
| 1 | « Արֆարմացիա» ՓԲԸ |

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

1.2 Մասնակից «Արֆարմացիա»ՓԲԸ-ի <<armeps.am>> էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

1.3 Մասնակից «Արֆարմացիա»ՓԲԸ-ի կողմից առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշները համապատասխանում են հրավերով սահմանված նվազագույն պահանջներին:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

1.4 Մասնակից «Արֆարմացիա»ՓԲԸ-ի գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

1.5 Մասնակից «Արֆարմացիա»ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են՝

| Հ/Հ | Գնման Առարկան | Նախահաշվային Գինը | Մասնակցի անվանումը | Գինը Առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ն ներառյալ |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Թիամինհիդրոքլոր իդ 5% 1մլ | 5700 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 4675 | 935 | 5610 |
| 2 | Հակափայտացման շիճուկ | | | | | |
| 3 | Վիտամին D3 կաթիլներ | 28460 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 38900 | 7780 | 46680 |
| 4 | Պերինդոպրիլ 10 մգ | | | | | |
| 5 | Մեթիլպրեդնիզոլո ն 4մգ | | | | | |
| 6 | Օմեպրազոլ 20 մգ | 15600 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 9500 | 1900 | 11400 |
| 7 | Բենզիլպենիցիլին | | | | | |
| 8 | Ցեֆտրիաքսոն 1.0 | 69784 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 51646.67 | 10329.33 | 61976 |
| 9 | Հեպարին 5մլ | | | | | |
| 10 | Վիկասոլ 10մգ/մլ 1 մլ | | | | | |
| 11 | Գլյուկոզա 5% 500մլ | 3400 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 25333.33 | 5066.67 | 30400 |
| 12 | Սպիրոնոլակտոն 25մգ | | | | | |
| 13 | Պարացետամոլ 80մգ | | | | | |
| 14 | Ամլոդիպին բեզիլատ | 5800 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 4750 | 950 | 5700 |
| 15 | Կորդիամին 25% 2մլ | | | | | |
| 16 | Յոդ 5% 30 մլ | | | | | |
| 17 | Պովիդոն համարժեք Բետադին 10% 1լ | 9000 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 8316.67 | 1663.33 | 9980 |
| 18 | Սուլֆամեթօքսազո լ-տրիմետոպրին 240 մգ/5մլ | | | | | |
| 19 | Ատենոլոլ 50 մգ | 1500 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 945 | 189 | 1134 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 20 | Պարացետամոլ 150մգ | | | | | |
| 21 | Էնալապրիլ /հիդրոքլոր թիազիդ/ | 13200 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 9350 | 1870 | 11220 |
| 22 | Դիազեպամ 2մլ 10 մգ | | | | | |
| 23 | Վարֆարին 2.5մգ | | | | | |
| 24 | Թիոպենտալ նատրի 0.5 գ 500 մլ | | | | | |
| 25 | Դիգօքսին 0.25 մգ | 11000 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 4583.33 | 916.67 | 5500 |
| 26 | Դեքսամեթազոն | | | | | |
| 27 | Օքսիտոցին 1.0 | 22800 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 18166.67 | 3633.33 | 21800 |
| 28 | Իզոսորբիդ դինիտրատ 10 մգ | | | | | |
| 29 | Լիդոկային 2%-2.0 | 5000 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 4160 | 832 | 4992 |
| 30 | Ամպիցիլին 1.0 | | | | | |
| 31 | Կատաղության դեմ պատվաստանյութ | | | | | |
| 32 | Ատրոպին 0.1% 1մլ | | | | | |
| 33 | Էպինեֆրին 18% 1մլ | | | | | |
| 34 | Գենտամիցին 40մգ/2մլ | | | | | |
| 35 | Նիտրոգլիցերին ԱՄ 0.5 մգ | | | | | |
| 36 | Պարացետամոլ 0.5 գ | | | | | |
| 37 | Դրոտավերին 2մլ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | նիտրոգլիցերին | | | | | |
| 39 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ B01AC30 | | | | | |
| 40 | ամինոֆիլին r03da05 | | | | | |
| 41 | Ֆերում լեկ | | | | | |
| 42 | Վիտամին E | | | | | |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.6 Ընթացակարգի 3, 11 և 17 -րդ չափաբաժինների մասով միակ մասնակից <Արֆարմացիա>ՓԲԸ -ի գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գները, ուստի հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատումը և օրենքով սահմանված կարգով մասնակցին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների,որը տեղի կունենա 10.09.2018թ.-ին ժամը 12:00-ին , Արագածոտնի մարզ,գյուղ Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան 16 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու գնման ընթացակարգի բարձր գնային առաջարկների շուրջ բանակցությունների անցկացման մասին

(Զ. Սանոսյան)

Ընդունել ի գիտություն, որ բարձր գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցություններին <<armeps.am>> էլեկտրոնային կայքով ծանուցմամբ հրավիրված էր մասնակցելու միակ մասնակից «Արֆարմացիա» ՓԲԸ -ն:

2.1. Բարձր գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների անցկացման նիստին ներկա էր «Արֆարմացիա» ՓԲԸ -ն:

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ -0

Հանձնաժողովը որոշեց.

2.2. Ընթացակարգի 3, 11 և 17-րդ չափաբաժինների մասով ոչ գնային պայմանները բավարարող մասնակից «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ անցկացնել բանակցություններ : Արդյունքում «Արֆարմացիա» ՓԲԸ –ն համաձայնեց նվազեցնել նախահաշվից բարձր գնային առաջարկը 17-րդ չափաբաժնի մասով ներկայացնելով նոր գնային առաջարկ, իսկ 3-րդ և 11-րդ չափաբաժինների մասով հրաժարվեց նվազեցնել նախահաշվից բարձր գնային առաջարկները:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացրած նոր գնային առաջարկը 17-րդ չափաբաժնի մասով հետևյալն է՝

| Հ/Հ | Գնման Առարկան | Նախահաշվային Գինը | Մասնակցի անվանումը | Գինը Առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ն ներառյալ |
|---|---|---|---|---|---|---|
| 17 | Պովիդոն համարժեք Բետադին 10% 1լ | 9000 | «Արֆարմացիա»ՓԲԸ | 7500 | 1500 | 9000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.3 Ներկայացրած գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1, 6, 8, 14, 17, 19, 21, 25, 27, 29-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Արֆարմացիա»ՓԲԸ -ին, որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.4 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 3-րդ և 11-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, իսկ ընթացակարգի 2, 4, 5, 7, 9, 10, 12, 13, 15, 16, 18, 20, 22, 23, 24, 26, 28, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.5 Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.6 Հանձնաժողովը որոշեց «Արֆարմացիա»ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.7 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը հանձնաժողովը որոշեց՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ք. Սանոսյան)

3.1 Հանձնաժողովը որոշեց «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը՝ 11:00-ին, Արագածոտնի մարզ.գյուղ Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան 16 հասցեում :

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | Ջ. Սանոյան | |
| Անդամներ՝ | Դ. Ավետիսյան | |
| | Վ. Հայրապետյան | |
| | Ռ. Վարդանյան | |
| | Յ. Բաղդասարյան | |

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Ասատրյան